

ԴՐԱԳՈՐԾՎԵՐ

ՊԻԽԱՌԵՐՁԵ ՏՀԱՆ

ՊԵՏՅԱՐԱԿ 1937
ՅԵՐԵՎԱՆ

Գ. ԳՐԻԳՈՐՈՎԻԶ

1961 Տ.

ԳՈՒՌԱՎԱՐԵՐՉԵ ՏՂԱՆ

Թարգմանեց Պ. ԹՈՒՄՑԱՅԱՆ

706-804
A $\frac{\pi}{23461}$



ՊԵՏՎԱՏ
ՀՀԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1937

ՓՈՔՐԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԱԵՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. Խմբագիր՝ [REDACTED]

Տիկ. Խմբագիր Ա. Ա հ ա ն յ ա ն

Արքագրիչ Ա. Արքացանցին

Գլուխիսի լիազու Կ—4475 եռաւ, 3938 :

Պատվեր 1352, տիրած 3000

Պետքանի սպառան, Յեղիշան, II Անունյանի, 4

ԳՈՒՏՏԱՊԵՐՉԵՑ ՏՂԱՆ

1

Լարախաղաց Բեկերի սանը միայն աֆիշաներումն եր կոչվում գուտտապերչե տղա: Նրա խական անունը Պետյա եր: Սակայն ավելի ճիշտ կլիներ նրան անվանել դժբախտ տղա:

Նրա պատմությունը շատ կարճ եր, և վորտեղից կարող եր յերկար ու բարդ լինել, քանի վոր նա հազիվ ութ տարեկան եր:

Հինգ տարեկան հասակում նա զրկվել եր մորից, այնուամենայնիվ շատ լավ հիշում եր նրան: Այսորվա պես նա ուարդ պատկերացնում ե հրուծված, բաց գույնի, նոսր և միշտ խճճված մազերով մի կին, վորը մերթ գուրգուրում եր իրեն, լցնելով բերանն ինչ վոր ձեռքն ընկներ՝ սոխ, կարկանդակի կտոր, աղած ձուկ, հաց, մերթ հանկարծ առանց պատճառի հարձակվում եր իր վրա, բղավում, ծեծում ինչով պատահեր և վորտեղին դիպչեր: Այնուամենայնիվ Պետյան հաճախ մտարերում եր մորը:

Պետյաի հիշողության մեջ մնացել եր նաև մոր թաղման որը:

Հունվարյան մի խստաշունչ առավոտ եր:

Ամպամած ցածր յերկնքից թափվում եր մանր ու չոր ձլուն, յերբեմն ցրվելով ուժեղ քամուց: Նա ասեղների պես ծակծկում եր մարդկանց յերեսը և ալիքների պես փախչում սառած ճանապարհով:

Պետյան տատիկի և լվացարարուհի Վառվառակի հետ

գնում եր մոր դադաղի հետևից. նա զգում եր թե ինչ
անտանելի կերպով մոմում են ձեռքերի ու վոտքերի
մատները: Նա առանց այն ել հազիվ եր հասնում ուղե-
կիցներին: Նրա զգեստը պատահական հավաքածու եր՝
հարմարեցրած իր վրա: Պատահական ելին կոշիկները,
վորոնց մեջ նրա վոտներն ազատ շարժվում ելին, ինչ-
պես նավակներում: Պատահական եր վերնազգեստը, վորը
հնարավոր չեր հագնել, լեթե փեշերը վեր չքաշեր և գո-
տու մեջ չխրեր: Պատահական եր նաև գոնապանից խընդ-
րած գդակը, վորն ամեն լուսե իջնում եր աչքերին և
խանգարում Պետալին տեսնել ճանապարհը:

Դերեզմանոցից վերադառնալիս, տատիկն ու Վառվա-
ռան լերկար խորհրդակցում ելին, թե հիմա վորտեղ տե-
ղավորեն լերեխալին:

Իհարկե, վորպես զինվորի լերեխա, որենքով նրան
հարկավոր ե տեղավորել, վորտեղ հարկն ե, բայց ինչ-
պես անել, ում պետք ե դիմել, վերջապես ով կհոգա
այդ մասին:

Տղան շարունակում եր ապրել պառախերի տանն
ու զանազան անկուններում, և հայտնի չե թե ինչպես
կվճռվեր նրա բախտը, լեթե նրան ձեռք չմեկներ լվա-
ցարարուհի Վառվառան:

Լվացարարուհի Վառվառան ապրում եր Մոխովով*)
փողոցում մի մեծ տան լերկրորդ բակի նկուղում: Նույն
բակում, միայն վերեւում, տեղավորված ելին հարկան
կրկեսալին խմբից մի քանի մարդ: Նրանք զբաղեցրել
ելին մի շարք սենյակներ, վորոնք միացած ելին միջանց-
քով: Վառվառան նրանց բոլորին ել շատ լավ եր ճանա-
չում, քանի վոր միշտ լվանում եր նրանց սպիտակեղենը:

Նրանց մոտ բարձրանալիս Վառվառան հաճախ Պե-
տալին հետն եր տանում: Բոլորին հայտնի եր Պետալի
պատմությունը: Բոլորն ել գիտելին, վոր նա բոլորովին
վորը ե՝ առանց ծնողների և ազգականների: Խոսակցու-

*) Լենինգրադի փողոցներից մեկի անունն եւ Ե. Թ.:

թեան ժամանակ վառվառան հաճախ այն միտքն եր արտահայտում, թե ինչ լավ կլիներ, լեթե պարոններից վորես մեկը խղճար վորբին և նրա կըթությունն իր վրա վերցներ: Սակայն վոչ վոք չեր համարձակվում: Հստ լեռութիւն ամենքն ել բարականին հոգսեր ունելին: Միան մեկն եր վոր վոչ այն եր ասում և վոչ ել վոչ: Ժամանակ առ ժամանակ նա ուշադիր նայում եր տղալին: Դա լարախաղաց Բեկկերն եր:

Պետք ե լենթաղբել, վոր այդ խնդրի շուրջը նրա և վառվառալի միջն ինչ վոր գաղտնի ու պարզ բանակցություններ ելին տեղի ունենում, վորովհետեւ մի անգամ, լերը բացի Բեկկերից տանը վոչ վոք չեր մնացել, Վառվառան Պետալին շտապ վեր տարավ և ուղղակի մտան լարախաղացի սենյակը: Բեկկերը կարծես մեկին սպասում եր: Նա նստած եր աթոռի վրա և ծխում եր ծենապակալա ծոպակոր կոր ծխամորճից: Նրա գլխին փայլում եր թեք դրած տափակ, ուլունքներով զարդարած գլխարկը: Սեղանի վրա դրված ելին գարեջրի լերեք շիշ Երկուսը դատարկ և մեկը դեռ նոր սկսված:

Լարախաղացի փրփած դեմքն ու լեզան պես հաստ վիզը կարմիր ելին: Նրա ինքնավստահ դեմքն ու դիրքը կասկած չելին թողնում, վոր նույնիսկ ալստեղ՝ իր տանը, նա լցված եր իր գեղեցկության գիտակցությամբ:

— «Ահա, կարև Բոդդանովիչ, ահա տղան», — ասաց Վառվառան, առաջ մղելով Պետալին:

— «Լավ», անաց լարախաղացը — «բայց ին ալդպես չի կարող, հարկավոր մերկացնել տղա»....

Պետան մինչ այդ կանգնած եր անշարժ և քաշվելով նայում եր Բեկկերին: Վերջին խոսքերը լսելով, նա հետ քաշվեց ու պինդ կպավ լվացարարունու փեշից: Բայց լերը Բեկկերը կրկնեց իր պահանջը, և Վառվառան տղալին շուռ տվեց դեպի ինքն ու սկսեց նրան մերկացնել, Պետան ջղածգարար բռնեց Վառվառալի ձեռքերից, սկսեց բղավել ու թփրտալ խոհարարի դանակի տակ ընկած ճուտի պես:

— «Եղ ի՞նչ ե, սիրելիս, ի՞նչ խենթուլիկն ես, ի՞նչ մովաշար.... Հանվիքը, սիրելիս, հանվիք... վոչինչ, միտես սրան, ինչ հիմարն ե»— կրկնում եր լվացարարուհին, աշխատելով բանալ տղալի մատները և միենույն ժամանակ շտապ արձակում նրա շալվարի կոճակները:

Բայց լերեխան վոչ մի կերպ չեր թողնում: Ինչ վոր սարսափով համակված՝ նա պտուտակի պես գալարվում եր, կծկվում եր, կպչում հատակին, աղմուկով լցնելով ամբողջ սենակը:

Կարլ Բողդանովիչի համբերությունը հատավ: Ծխամորճը դնելով սեղանին, նա մոտեցավ տղալին և առանց ուշագրություն դարձնելու լերեխալի ավելի ուժեղ ընդդիմագրությանը, արագ գրկեց նրան: Պետքան դեռ չեր սթափվել, լերը արդեն զգաց իրեն ամուր սեղմված լարախաղի հաստ ծնկների մեջ: Վերջինս մի ակնթարթում հանեց նրա շալվարն ու շապիկը: Դրանից հետո նա ծղոտի պես բարձրացը լերեխալին և մերկ պառկեցնելով իր ծնկների վրա, սկսեց շոշափել նրա կուրծքն ու կողերը, բութ մատով սեղմելով այն տեղերը, վորոնք մի անգամից անբավարար ելին թվում իրեն և անեն անդամ ապտակում, լերը տղան կծկվում եր, խանգարելով նրան շարունակելու հետազոտությունը:

Լվացարարուհին խղճում եր Պետքալին: Կարլ Բողդանովիչը ինչպո՞ք շատ եր սիմբատում լերեխալին, բայց մուս կողմից ել Վառվառան վախենում եր պաշտամնել, քանի վոր ինքն եր բերել տղալին և լարախաղացը խոստացել եր պիտանի դուրս գալու դեսքում, լերեխալի կրթությունը վերցնել իր վրա:

Տղալի առաջ կանգնած նա շտապ շտապ սրբում եր արցունքները և համոզում եր նրան վոր չվախենա, և վոր Կարլ Բողդանովիչը վոչինչ վատ բան չի անի նրան, ալ միայն կքննի...

Բայց լերը լարախաղացը հանկարծ լերեխալին դրեց իր ծնկների վրա, թիկունքը շուռ ավեց դեպի իրեն և



ուսերը ծռեց դեպի հետ, նորից մատով սեղմեց լեռ-
կու թիւկների միջև, և լերէ մերկ տղալի վտիտ կուրծքն
ու կողերը գուրս ցցվեցին, գուռիս լետ ընկավ և ցավից
ու արսափից լերեխան նվազեց՝ Վառվառան ալիս
չդիմացավ և վրա պրծավ լերեխալին խիելու նրա ձեռքից:

Բայց արդեն Բեկերը վերջացրել եր և լվացարարու-
հուն հանձնեց լերեխալին, վորն իսկուն ուշի լեկավ և
միայն արցունքները կուլ տալով շարունակում եր դողալ:

— «Բավական ե սիրելիս, բավական ե. Տեսնում ես,
քեզ վոյինչ չարեցին: Կարլ Բողդանովիչը կամենում եր
քեզ միայն զննել... կրկնում եր լվացարարուհին, ամեն
կերպ աշխատելով փաղաքշել տղային:

Վառվառան ծածուկ նալեց Բեկերին, վորը զլիով
հավանութիւն նշան արեց և գարեջուր լցրեց բաժակի
մեջ:

Յերկու որ անցած տղան Բեկերին վերջնականա-
պես հանձնելիս՝ լվացարարուհին ստիպված եր խորա-
մանկութիւն դիմել: Բայց ալատեղ արդեն չազդեցին ար-
դալի վրա վոչ նոր չթե շապիկը, վոր Վառվառան իր սե-
փական փողովն եր զնել վոչ անանուխի քաղցրահացը,
վոչ հորդորանքը, վոչ ել փաղաքշանքը:

Պետան վախենում եր բղավել, վորովհետեւ ալս բանը
կատարվում եր Բեկերի սենյակում: Նա արտավալից
դեմքը ծածկել եր լվացարարուհու փեշերի մեջ և հուսա-
հատ անտիրական կորածի պես, ամեն անդամ կպչում եր
լվացարարուհու ձեռքերին, լերը վերջինս շարժվում եր
դեպի դուռը, վորպեսզի նրան թողնի Կարլ Բողդանո-
վիչի մոտ:

Վերջապես ալդ բոլորը ձանձրացրին լարախաղացին:
Նա բոնելով տղալի ոձիքից պոկեց Վառվառալի փեշերից,
և հենց վոր Վառվառալի հետեխից դուռը ծածկվեց, կանգ-
նեցնելով տղալին իր գեմը՝ հրամակեց ուղիղ նախել իր աշ-
քերին: Պետան շարունակում եր տեսնդորեն դողալ: Նրա
նիհար ու հիվանդոտ դիմադերը մի տեսակ կծկվել ելին
ինչ վոր թուլը խղճալի ծերուկի պես:

Բեկիերը բոնեց նրա կզակից, դեմքը դարձրեց դեմպի ինքը և կրկնեց հրամանը.

— «Դեմ, տղա լսել» — ասաց նա ցուցամատը սպառնալից մոտեցնելով Պետալի քթին:

— «Յերբ դու ուզենալ այնտեղ» — նա ցուց տվեց գեղի դուռը — «Ես քեզ խփել ալստեղ» — ցուց տվեց սեղքեց ցած — «Ալինդ, պինդ» — ավելացրեց նա՝ թողնելով տղալին իր ձեռքերից և խմելով մնացած դարեջուրը:

Հենց նույն առավոտը Բեկիերը նրան տարավ կրկես Այնաեղ բոլորն իրար անցած դասավորում ելին իրերը Հետելալ որը խումբն իր ամբողջ իրերով, մարդկանցով և ձիերով տեղափոխվում եր Ռիդա՝ անառալին սեղոնի համար:

Առաջին բոպեներին նորություններն ու բազմատեսակ տպավորություններն ավելի շուտ վախեցնում ելին Պետալին, քան թե նրա մեջ հետաքրքրություն առաջացնում: Նա քաշվեց մի անկյուն և վայրենու պես նախում եր թե ինչպես կրկեսի ծառայողները վազվզում ելին դես ու դեն՝ փոխադրելով իրեն անծանոթ իրեր: Մի քանիսը նկատեցին անծանոթ տղալի խարտաշ գլուխը, բայց նրանով զբաղվելու ժամանակը չեր: Ու բոլորն ել անց ելին կենում:

Խմբի Ռիդա տեղափոխվելու տասն որվա ընթացքում, Պետան իր կամքին եր թողնված: Գնացքի մեջ նրան շրջապատողներն ալժմ արդեն ալնքան ել ոտար մարդիկ չելին և նա շատերին արդեն ճանաչում եր: Շատերն ուրախ մարդիկ ելին, կատակներ ելին անում, յերգում, և նրան ալլաս վախ չելին պատճառում: Գտնվեցին նույնիսկ այնպիսիները, ինչպես որինակ ծաղրածու եղվարդուր, վորն ամեն անգամ մոտովն անցնելիս, միշտ նրա ալտերն եր փաղաքշանքով շոյում: Մեկ անգամ նույնիսկ կանանցից մեկը նրան տվեց նարինջի մի կտոր:

Մի խոսքով Պետան հետզհետե սկսեց ընտելանալ նրանց, և նա կարող եր իրեն ավելի լավ զգալ, յեթե

գտնվեր վոչ թե կարլ Բոդղանովիչի, այլ մեկ ուրիշ
մոտ: Բայց նրան չեր կարողանում ընտելանալ: Նրա
ներկալութեամբ Պետյան լոռում եր, ամբողջապես մի տե-
սակ կծկվում ու ջանք թափում զսպել արտասուքը...

Նրա գրությունն առանձնապես վատացավ: Երբ
սկսեցին պարապմունքները: Հենց առաջին փորձերից Բեկ-
կերը համոզվեց, վոր ինքը սխալված չե տղաւի ընտրու-
թյան նկատմամբ:

Պետյան բմբուլի պես թեթև եր և ճկուն կազմվածք
ուներ: Սակայն այդ բնական հատկություններին տիրա-
պետելու համար նրա մկանները գեռ թուլ ելին: Բայց
դա դժբախտություն չեր: Բեկկերը չեր կասկածում, վոր
վարժություններով մկանները կուժեղանան: Նա հենց աչժմ
վորոշ շափով կարող եր համոզվել այդ բանում:

Դրանից մի ամիս անց նա ամեն առավոտ և յերեկո
նստեցնելով տղաւին հատակի վրա, հարկադրում եր կը-
ռանալ մինչև վոտները: Պետյան այդ բանն արդեն անում
եր ինքն իրեն, առանց մեկի ոգնության: Անհամեմատ
ավելի դժվար եր նրան վոտները հետ ծոել և կրունկը
կպցնել ծոծրակին: Սակայն կամաց-կամաց դրան ել
սկսեց վարժվել: Նա հույնպես ճարպկորեն սկսում եր վա-
զելով ցատկել աթոռի վրաւից: Բայց Երբ Բեկկերը պա-
հանջում եր Պետյավից կրկին հետ թռչել աթոռի մուռ
կողմը և կանգնել ձեռքերի վրա՝ պահելով վոտներն ողում,
այդ բանը նրան շատ քիչ եր հաջողվում: Պետյան գլըխ-
կոնծի յեր գալիս, ընկնում յերեսի կամ գլխի վրա, քիչ
եր մնում վիզը կոտրի:

Անհաջողությունը կամ ջարդվածքը գեռ դժբախտու-
թյան մի մասն ելին, իսկ մյուս ավելի ծանր մասը՝ դա
Բեկկերի ամեն անգամ հասցըրած հարվածներն ելին: Տը-
ղաւի մկաններն առաջվա պես թուլ ելին մնում: Շատ
պարզ ե, վոր նրանը պահանջում ելին ուժեղ մնունդ:

Բեկկերի սենյակն եր բերված շարժական յերկտակ
յելարան, վորի աստիճանների վորոշ բարձրության վրա
դրվում եր հորիզոնական մի փայտ:

Բեկկերի հրամանով Պետյան վազելով պետք ե ցատ-
կեր ու բռներ փալտից և կախված մնար, սկզբում հինգ
րոպե, ապա տասն, և այսպես որական մի քանի անգամ:
Զանագանությունը կայանում եր նրանում, վոր լերբեմն
պարզապես պետք ե կախ մնար, իսկ լերբեմն ել փալտից
կախված ժամանակ ամբողջ մարմնով հետ ճոճվեր ու
վոտներն անցկացներ փալտի և իր զլիսի միջով: Վարժու-
թյան նպատակը կայանում եր նրանում, վոր վոտների
թաթերով կախ ընկներ փալտից, հանկարծակի բաց թող-
ներ ձեռքերը և այսպես կախված մնար թաթերով:

Դժվարությունը գլխավորապես կայանում եր նրա-
նում, վոր լերբ վոտները գերհում ելին, իսկ զլուխը ցած-
րում, դեմքը պետք ե պահպաներ ուրախ և ամենազու-
րեկան արտահայտություն: Մրանք անհրաժեշտ ելին հա-
սարակության վրա լավ տպավորություն թողնելու հա-
մար, վորպեսզի հասարակությունը վոչ մի դեպքում չը-
կասկածեր լարված մկանների դժվարության մասին, վո-
րից առաջանում եր ուսերի հողերի ցավ և կրծքի ջղաձղա-
կան սեղմում:

Ալդ վարժությունը շատ հաճախ վերջանում եր տը-
ղալի սրտամորմոք ճիշով ու այնպիսի կանչերով, վոր
Բեկկերի ընկերները ներս ելին ընկնում սենլակն ու խը-
լում տղալին նրա ձեռքից:

Սկսվում եր վեճ ու հալուանք, վորը Պետյալի հա-
մար շատ անգամ լերբեմն ավելի վատ հետեվանք եր ու-
նենում:

Սակայն լերբեմն ել այդպիսի կողմանակի միջամտու-
թյունը վերջանում եր ավելի խաղաղ կերպով: Ալդպես
եր լինում, լերը գալիս եր ծաղրածու Եղվարդու: Նա
սովորաբար գործը հարթում եր ուտելիքով ու գարեջրով:
Յեկ ընկերաբար զրուցելիս Եղվարդոն ամեն անդամ աշ-
խատում եր ապացուցել, վոր Բեկկերի սովորեցնելու ձեռ-
քոլորովին անպետք ե, վոր սարսափեցնելով ու ծեծելով
վոչ մի արդյունք չի ստացվի վոչ միայն լերեխաներից,

ալ նույնիսկ շներից ու կապիկներից վախն անողայման թուլասրություն ե ներշնչում, իսկ թուլասրությունը մարզիկի առաջին թշնամին ե, զորովհետև նրանից խուռ ե ինքնավստահությունը և քաջությունը, իսկ առանց դրանց ջլերն ել կծովեն, վիզն ել կծովի և մեջքի վողնաշարն ել կկոտրվի:

Յեվ տարօրինակ բան: Ամեն անգամ, յերբ Եղվարդ-սը զրուցից ու գարեջրից տաքացած փորձում եր որի-նակով ապացուցանել այս կամ այն բանը՝ Պետյան վարժությունը կատարում եր մեծ ճարպկությամբ ու հա-ճուցքով:

Խմբում արգեն բոլորն ել ճանաչում ելին Բեկկերի սանին: Վերջին ժամանակները Բեկկերը հանդերձարանից տղայի համար ձեռք բերեց ժաղըածուի զեեսա:

Սպիտակացնելով նրա դեմքը, կարմրացնելով յերկու ալտերը, ներկալացումների ժամանակ նա դուրս եր բե-րում Պետյալին կրկեսի արենան:

Յերբեմն փորձի համար Բեկկերը հանկարծակի բարձ-րացնում եր նրա վոտքերը և ստիպում նրան ձեռքերի վրա վագել կրկեսի արենալով: Պետյան այն ժամանակ լարում եր իր բոլոր ուժերը, սակայն նրանք հաճախ դաշտաճանում ելին իրեն: Վորոշ ապարածություն ձեռ-քերի վրա վագելով, նրա ուսերը հանկարծ թուլանում ելին և նա զլիսիվար ընկնում եր ավազի վրա, զորով ուրախ ծիծաղ եր պատճառում հանդիսականներին:

Անտարակույս Եղվարդսի ղեկավարությամբ նա ավե-լի շատ հաջողություն կունենար, մինչզեռ Բեկկերի մոտ նրա առաջադիմությունը նկատելի կերպով դանդաղում եր, Պետյան առաջին որվա պես շարունակում եր վախենալ իր գաստիարակից: Դրան միանում եր նաև մեկ ուրիշ զգացմունք ևս, վորն ինքը չեր կարողանում բացատրեց բայց վորն աստիճանաբար աճում եր նրա սեջ, ճնշում նրա մտքերն ու զգացմունքները, ստիպելով զիշերներն ան-կողնում պառկած դառն արտասպել, միաժամանակ ականչ դնելով լարախաղացի խոմքոցին:

Յեկ վոչինչ, վոչինչ չեր անում Բեկկերը, վորպեսզի
տղային գոնե մի քիչ գրավեր: Նունիսկ այն գեղքերում,
լերը տղան մի վորեն հաջող բան եր անում, Բեկկերը լեր-
բեք չեր փաղաքում նրան, այլ բավականանում եր միան
բարյացակամորեն նայել իր հակա մարմինի բարձունքից:

Ըստ լերեռութին, Բեկկերի համար, միենուն եր,
վոր լվացարարուհի Վառվառացի Պետլալին նվիրած լեր-
կու վերնաշապկից միայն ցնցոտիներ ելին մնացել վոր
տղան լերկու շաբաթով շապիկ չեր փոխում, վոր նրա
վիզն և ականջները միշտ կեղտու ելին, կոշիկները
պատռուված ելին այն աստիճան, վոր փողոցի ցեխն ու
ջուրը մեջն ելին լցվում:

Լարախաղացի ընկերները, և ամենից շատ Եղվարդ-
ոը, հաճախ հանդիմանում ելին նրան ալդ բանի համար:
Վորպես պատասխան Բեկկերն անհամբեր սուլում եր ու
միպոտը շրխկացնում եր շալվարին:

Նա շարունակում եր սովորեցնել Պետլալին և ամեն
անգամ պատժում եր նրան, լերը վորեն բան անհաջող եր
դուրս գալիս:

Խնդիր Պետերբուրգ*) վերագառնալուց հետո՝ մի ան-
գամ Եղվարդը Պետլալին մի շնիկ նվիրեց: Տղան հըրձ-
վանքի մեջ եր: Յեկ ալուս գնալիս, և՛ միջանցքներում
ձան գալիս, նա միշտ իր հետն եր տանում շնիկին, ցուց
եր տալիս բոլորին և շարունակ համբուրում եր նրա բաց
վարդադույն գնչիկը:

Մի անգամ ներկայացման ժամանակ հանդիսական-
ները Բեկկերին կրկին բեռ չկանչեցին, և նա սաստիկ
վրդոված վերադառնում եր ներքին միջանցքով: Տեսնե-
լով շնիկին Պետլալի գրկում՝ նա խլեց հանկարծ ու կո-
շիկի քթով մի կողմ նետեց: Շնիկի գլուխը դիպավ պատին,
ընկավ ու հենց տեղն ու տեղը սատկեց:

Պետլան լաց լեղավ ու գագեց Եղվարդսի մոտ, վորն
ալդ ըսպելին դուրս եր գալիս հագնվելու սենյակից:

*) Այժմ լենինգրադ:

Քիկկերն ամեն կողմից նախատինք լսելով՝ ավելի ջղալ-
նացավ և մեկեն քաշելով Պետյալին Եղվարդակից՝ ուժեղ
ապտակեց նրան:

Չնալած Պետյան թեթև ու ճկուն եր, բայց նա ան-
քան գուտտապերչից չեր, վորքան մի դժբախտ տղա լեր:

2

Կոմա Լիստոմիրովի տան մանկական սենյակները
տեղավորված ելին հարավալին կողմը, և գուլը ելին գա-
լիս գեղի պարտեզ: Հրաշալի շենք եր:

Ամեն անգամ, լերը արե եր լինում, արևածագից
մինչև մայրամուտը՝ ճառագալթները շարունակ լուսամու-
տից ներս ելին թափանցում: Պատուհանների միայն ներ-
քեի մասը ծածկված ելին կերպասե լերկնագույն վարա-
գույըներով՝ լերեխանների աեսողությունն ավելորդ լուլ-
սից պահպանելու համար: Նույն նպատակով բոլոր սե-
նյակների հատակները ծածկված ելին լերկնագույն գոր-
դերով և պատերն ել պատած վոչ շատ պայծառ գույնի
պաստառներով:

Մի սենյակի պատերի ամբողջ ներքեի մասում խա-
ղալիքներ ելին գարսված:

Անգլիական տետրակներն ու գրքուէկները՝ զարդար-
ված գույնզգույն նկարներով, տիկնիկներն՝ իրենց փոք-
րիկ մահճակալներով, նկարները, կամոզները, փոքրիկ
խոհանոցները, ճենապակե ամանեղենը, գառնու կներն ու
շնիկները տակառիկների վրա՝ աղջիկների սեփականու-
թյունն ելին հառարվում:

Իսկ անագե զինվորներով սեղանները, կառքին լը-
գած կատաղի աշքերով ստվարաթղթից պատրաստված
ու զանգակիկներով զարդարված մոխրագույն լերեք ձիերը,
սալակին լծված սպիտակ միծ ալծը, հեծլալ կազակը,
թմրուկն ու պղնձե շեփորը, վորի ձայնը անգլուհի միսս
Բլիկսին սաստիկ ջղանություն եր պատճառում՝ տղանե-

ըի սեփականությունն եր համարվում: Այդ սենյակը հենց
ալղպես ել կոչվում եր «խաղաւենյակ»:

Բարեկենդանի չորեքշաբթի որն աշնտեղ մեծ աշխու-
ժություն եր տիրում: Խաղասենյակը լցված եր մանուկ-
ների խանդավառ կանչերով: Առանձնապես վոչինչ չկար:
Ա՛յ թե ինչ եր: Ի մեջի ալլոց ասել ելին՝

— «Յերեխաներ, գուք բարեկենդանի հենց ոկզից
սիրելի ու հնազանդ եք յեղել: Այսոր չորեքշաբթի յե:
Յեթե դուք ալղպես ել շարունակեք, ուրբաթ որը յերե-
կուան ձեզ կտանեն կրկես:

Այս բանը նրանց ասել եր մորաքուլը Սոնյան: Դեռ
չեր վերջացրել նա իր խոստումը, յերբ ամեն կողմից
բավեցին բացականչություններ, վոստյուններ և այլ ավե-
լի կամ պակաս ուրախ արտահայտություններ:

Մանկական այդ ուրախության մեջ, ամենից շատ
զարմացրեց հինգ տարեկան փոքրիկ Պաֆը: Նա միշտ
ծանրաշարժ եր յեղել: Բայց այստեղ իր լսած պատճու-
թյունների և կրկես տեսնելու ցանկության, ինչպես նաև
կրկեսում տեսնելիքի տպավորության տակ՝ Պաֆը հանկարծ
հրձանքից չորս թաթի յեկավ, բարձրացրեց ձախ վոտը
և լեզվով ուղցնելով թուշը, իր կիրգիզի աչքերը չոելով
ներկա յեղողների վրա, սկսեց նմանվել ծաղրածուին:

— «Բարձրացրեք դրան, շուտով բարձրացրեք, թե չե
արյունը գլխին կխփի»— բացականչեց Սոնյա մորաքուլը:

Նոր բացականչություններ, նոր վոստյուններ Պաֆի
շուրջու, վորը վոչ մի կերպ չեր ուզում վեր կենալ հատա-
կից և համառությամբ բարձրացնում եր մեկ մի վոտը,
մեկ մլուսը:

— «Յերեխաներ, յերեխաներ, բավական եւ: Դուք,
ինչպես յերեսում ե, չեք ուզում այլևս խելոք լինել չեք
ուզում լինել...»— ասում եր մորաքուլը Սոնյան, ավելի
դժոհելով գլխավորապես այն բանի համար, վոր ինքը
բարկանալ չգիտեր:

Նա պաշտում եր «իր մանուկներին», ինչպես սովո-

բություն ուներ նրանց անվանելու։ Պետք ե սսած, յերեւ-
խաներն իսկապես շատ սիրելի ելին։

Մեծ աղջիկը Վերոչկան արդեն ութ տարեկան եր։
Նրանից հետո գալիս եր վեց տարեկան Զինան, իսկ
տղան, ինչպես ասացինք, հինգ տարեկան եր։


Նրա անունն եր Պավել։ Բայց աղալին հաջորդաբար
զանազան մականուններ ելին տվել՝ Բերի, Բշտիկ, Խմբլիկ,
Բուլիկ, և վերջապես Պաֆ — և այդ անունն այդպես ել մնաց
վրան։ Տղան թժբիկ եր, կարճիկ, փամփլիկ, սպիտակ
մարմնով ինչպես կաթի սերը, գնդաձև գլխով և կլոր գեմ-
քով, վորի վրա միակ նկատելին կիրգիզսկան փոքրիկ
աշքերն ելին, վորոնք լայն բացվում ելին ուտելիքի ժա-
մանակ կամ այդ մասին խոսելիւա

Կրկես տանելու խոստման բոպելից, մեծ աղջիկը՝ Վե-
րոչկան՝ ամբողջովին ուշադրություն դարձավ և սկսեց
աշալուրջ հետեւ իր քրոջ ու յեղբոր վարքին։ Հենց վոր
նրանց մեջ գժտություն եր առաջանում, նա ուրախ մոռ
եր վազում, միենուկն ժամանակ նայելով վեհապանծ միսս
Բլիկսին, սկսում եր արագ-արագ ինչ վոր շնչար Զիգիին
և Պաֆին ու հերթով համբուրելով մեկ օրան մեկ նրան,
միշտ հաջողեցնում եր նրանց մեջ խաղաղություն ու
համաձայնություն կայացներ։

Վերջապես հասավ անհամբեր սպասված ուրբաթ որը։
Սեղանատան մեծ ժամացուցը խփեց տասնյերկուուր։ Հենց
այդ բոպելին սպասավորներից մեկը դռները լայն բաց արեց
և յերեխաները անդլուհու և շվեցարուհու ուղեկցությամբ
մտան սեղանատան։ Նախաճաշը սովորականին պես անցավ
մեծ հանդիսավորությամբ։

Զիգին ու Պաֆը, վորոնց Վերոչկան առաջուց նա-
խազգուշացրել եր՝ վոչ մի ձայն չհանեցին։ Վերոչկան
աշքը շեր հեռացնում յեղբորից ու քրոջից։ Նա հոգատար
կերպով կանխում եր նրանց ամեն մի շարժումը։

Նախաճաշից հետո միսս Բլիկսն իր պարտքը համարեց
հայտնել կոմսուհուն, վոր յերեխաներին նա յերբեք չեր
տեսել այնպես որինակելի, ինչպես վերջին որերս։



A II 2344
7091801



Կոմսուհին պատասխանեց, վոր նա արդեն իր քրոջից լսել ե այդ մասին և կարգադրել ե այդ լերեկովի համար կը կեսի ոթէակի տոսն վերցնել:

Այս խոսքի վրա վերոշկան, վոր լերկար ժամանակ համբերել եր, այլևս չկարողացավ զսպել իրեն։ Յատկելով աթոռից նա այնպես պինդ գրկեց կոմսուհուն, վոր մի վաւըկան բոլորովին ծածկեց նրա գեմքն իր փափուկ ու լերկար մազերով։

Վերոշկան մոտեցավ դաշնամուրին, վորի վրա դըր-ված ելին աֆիշաները։ Մատնացուց անելով նրանցից մեկը, իր կապույտ աշքերը դարձնելով մոր վրա և անհամբերությունից բոլորովին թուլացած, քնքույշ աղա-չական ձայնով ասաց։

— Մալրիկ, կարելի՞ լե, կարելի՞ լե վերցնել այս ափիշան։

— Կարելի լե։

— Զիզի, Պաֆ — խանդավառ բացականչեց վերոշկան՝ թափահարելով ափիշան — գնանք շուտով։ Յես ձեզ կը պատմեմ բոլորը, ինչ վոր ախոր աեսնելու յենք կրկեսում։ Բոլորը կպատմեմ։ Յերթանք մեր սենյակները…

— Վերոշկա, Վերոշկա... — թեթև հանդիմանությամբ կանչեց կոմսուհին։

Բայց վերոշկան ալիև նըտն չեր լսում, նա սլանում եր, իսկ նրա հետեւից քուլըն ու լեզրալը, վորոնց հետեւից հետալով ու ծանր շունչ քաշելով հազիվ հասնում եր միսս Բլիկուը։

Պարձառ արեով լուսավորված խաղասենյակն աշխոռ-ժացավ։

Խաղալիքներից ազատված ցածրիկ սեղանի վրա փըռ-ված եր ափիշան։

Վերոշկան վճռականորեն պահանջեց, վոր բոլոր ներկա լեզողները՝ և՛ մորաքուլը Սոնյան, և՛ միսս Բլիկուը, և՛ լերաժշտության ուսուցչուհին, և՛ լերեխան ձեռին ներս լեկած դալակիը — բոլորն ել նստեն սեղանի շուրջը։

Անհամեմատ ավելի դժվար եղ նստեցնել Զիզին և
Պաֆին, վորոնք իրար բոթբոթելով անհամբեր շրջապա-
տռւմ ելին Վերոշկալին մեկ այս կողմից, մեկ այն կողմից,
բարձրանում ելին աթուների վրա, պառկում սեղանին
և իրանց արմունկներով համարչա ծածկում ափիշան:

Վերջապես մորաքրոջ ոգնությամբ այդ ել կարգա-
վորվեց: Վերոշկան հետ գցեց մաղերը, թեքվեց դեպի
ափիշան և առանձին վողերությամբ կարգաց:

— «Գուստավիե տղան: Ողային վարժություններ
վեց արշին բարձրության ճողի ծալրին»: Վոչ, «որաքուչը
ջան, այդ արդեն դու կատամես մեզ: Գու արդեն կատ-
մես... Ինչպիսի տղա լե: Իսկական: Կենդանի տղա: Ի՞նչ
են նշանակում գուտտապերչե:

— Հավանական ե, այդպես են ասում, վորովհետեւ
նա շատ ճկուն ե... վերջապես դուք ինքներդ կտեսնեք:

— Վոչ: վոչ, հիմա պատմիր, պատմիր, ի՞նչպես պետք
են առ ողում վարժություն անի, և այն ել ձողի վրա,
ի՞նչպիս պետք ե անի...

— Ի՞նչպես պետք ե անի, — կրկնեց Զիզին:

— Անի — կարճ արտասանեց Պաֆը բաց անելով
բերանը:

— Յերեխաներ, դուք ինձ շատ բան եք հարցնում,
իես, ճիշտն ասած, վոշինչ չեմ կարող ձեզ բացատրել:
Այսոր էրեկուան դուք ամեն ինչ կտեսնեք: Վերոշկա, լավ
կլիներ դու շարունակելիր կարդալ: Դե, հետո ի՞նչ կա...

Բայց ընթերցումն արդեն այնպես աշխուց չշարու-
նակվեց: Հետքը բությունը նկատելի կերպով թուլացավ:
Նա անընդշապես կենարոնացավ այժմ գուտտապերչե
դպաւի վրա:

— Գու տասապերչե տղան դարձավ զանազան լենթա-
դրությունների, խսակցությունների, նույնիսկ վիճա-
բանության առարկա...

Զիզին և Պաֆը լսել անգամ չուզեցին ափիշալի շա-
բունակությունը: Նրանք իջան աթոռներից և աղմուկով

ակսեցին խաղալ՝ ցուց տալով թե ի՞նչ պիտի կատարե գուտտապերչե տղան:

Պաֆը կրկին չորեքթաթ յեկավ։ Ծաղրածուի պես բարձրացնում եր ձախ վոտը և ուժգին ուռցնում լեզվով թուշը, նայում բոլորին իր կիրակիզական աչքերով, վորի համար մորաքուզը Սոնչան շարունակ բացականշում եր վախենալով, վոր արյունը կիշնի նրա գլուխը։

Աֆիշան արագ կարդալով ու վերջացնելով՝ Վերոչկան ևս միացավ իր քրոջն ու յեղբորը։

Յերբեք այլպես ուրախ չեր յեղել խաղասենյակում։ Արեի ճառագալթներն անցնելով պարտեզի հետեւ հարևան տների կտուրներից՝ լուսավորում ելին խաղացող յերեխաներին, լուսավորում ելին նրանց ուրախ, աշխուց և կարմրած գեմքերը, խաղում ելին չորս բոլորը թափթափած գույնզգույն խաղալիքների վրա, սահում փափուկ գորզի վրալով և լցնում ամբողջ սենյակը մեղմ ու ջերմ լույսով։ Կարծես թե ալստեղ ամեն ինչ ուրախանում եր ու հըրձ- գում։

Յերեխաները ճաշի ժամանակ հետաքրքրվում ելին թե ի՞նչպիսի յեղանակ և ժամը քանիսն եւ։

Մորաքուզը Սոնչան զուր ջանք եր թափում յերեխա- ների մտքերը փոխելու այլ ուղղությամբ, հնարավորու- թյան սահմաններում, և հանդարաեցնել նրանց։

Ճաշից հետո մորաքուզը վերադարձավ մանկանոց։ Փալող գեմքով նա հայտնեց նրանց, վոր կոմսն ու կոմ- սուհին կարգադրեցին յերեխաներին հազցնել և տանել կըկես։

Մի ակնթարթում բոլորը վեր թռան, դես ու դեն վազեցին սենյակում, վորն ալժմ արդեն լուսավորված եր լամպաներով, Պետք յեղավ սպառնաւ վոր տանը կթող- նեն նրանց, ովքեր կրնղիմանան և թուլ չեն տա, ի՞նչ- պես հարկն ե, փաթաթել իրենց։

Շուտով յերեխաներին գուրս բերին գլխավոր առ- տիճանների առաջ, նորից մի անդամ ևս ուշադիր զննե-

թին, լավ փաթաթեցին նրանց և զերջապես իջեցրին գլխավոր մուտքի մոտ, վորի առաջ կանգնած եր կիսով չափ ձևուսով ծածկված չորս տեղանի փակ կառքը: Կառքի դռները փակվեցին, սպասավորը ցատկեց կառապանի կողքը և կառքը շարժվեց:

3

Կըկեսում ներկայացումը դեռ չեր սկսվել: Առանձ- նապես վերին շարքերը լցված ելին հանդիսականներով: Պճնված հասարակությունը սովորականին պես ուշանում եր: Նվազախումբը թնդացնում եր կըկեսն իր գործիքներով: Վերեկց և կողքերից լուսով վողողված և փոցխերով հարդարված կլոր արենան դեռ դատարկ եր:

Հանկարծ նվազախումբն սկսեց արագ տեմպով նվազել: Ախոռի մուտքի վարագույրը բացվեց և այնտեղից դուրս էիկան էերկնագույն էերիզներով, կարմիր սպասազգեստ հագած քան մարդ: Նրանք բոլորն ել բարձրակրունկ կոշիկներով ելին: Գլխի մազերը ձիգ վոլորած, փալում ելին ոծանելիքից: Կըկեսի մի ծալրից մլուսը հավանության շշուկ անցավ: Ներկայացումն սկսվեց:

Կըկեսի սպասազգեստավոր կազմը. սովորականին պես, դեռ էերկշարք չեր կանգնել, էերը արգեն ախոռների կողմից լավեց սուր ճիչ ու քրքիջ, և ծաղրածուների մի ամբողջ բանակ զլորպելով, ձեռների վրա ընկնելով, ողում թռիչքներ աներով դուրս թուավ արենա: Ամենից առաջ գտնվում եր կարճ վերնազգեստ հագած, կրծքին ու մեջքին մեծ թիթեռնիկներ ամրացրած ծաղրածուն: Հանդիսականներն անմիջապես հանաչեցին իրենց սիրելի եղամբութիւն:

— Բրանկո, Եղվարդո, Բրանկո, Բրանկո — լավեց ամեն կողմից:

Բայց Եղվարդը այս անդամ չարդարացրեց նրանց սպասածը: Նա հատուկ վոչ մի բան չարեց: Մի քանի անդամ գլուխկոնծի տալով, սիրամարդի փետուրը քթին

որորելով նա անցավ արենայի շուրջն ու արագ ծածկվեց։ Հետո վորքան ծափահարեցին ու դուրս կանչեցին, նա այլնս հանդես չեկավ։

Նրան փոխարինելու համար շատապ կարգով դուրս բերվեց գեր ու սպիտակ ձի և դուրս վաղեց տասնհինգ-ամյա Ամալիան՝ խոնարհվելով շնորհալի կերպով չորս կողմը։

Որիորդ Ամալիային փոխարինեց ձեռնածուն։ Նրանից հետո ել դուրս լեկավ ծաղրածուն իջ վարժեցրած զներով։ Նրանից հետո պարեցին լարերի վրա։ Դուրս բերին բարձր կարգի վարժեցրած ձի, արշավեցին մի անթամք և լերկութաճած ձիերով — մի խոսքով ներկայացումն իր կարգով շարունակեց մինչև ընդմիջումը։

— Մորաքուըր ջան, այժմ պետք ե գուտտապերչետղան լինի, համ — հարցըց վերոշկան։

— Ա, աֆիշայում զրկած ե, զոր նա լերկորդի բաժնում պետք ե լերնան զա։ Հը՛, թնչակես։ Զվարճալի՛ լե արդոք, լերեխաներ։

— Ա՛խ, չափազանց զվարճալի՛... չափազանց — սքանչացած բացականչեց վերոշկան։

— Իսկ քեզ համար, Զիզի, քեզ, Պաֆ, զվարճալի՛ լի։

— Իսկ կրակելու լին, — հարցըց Զիզին։

— Վոչ, հանդաբարվիր, գրված ե, չեն կրակելու։

Պաֆից վոչինչ հասկանալ չեր կարելի։ Ընդմիջումի էենց առաջին բովեներից՝ նրա ամբողջ ուշադրությունը կլանված եր շրջիկ մատուցողի մոտ գտնվող քաղցրավենիներով ու խնձորներով։

Նվագախումբը նորից նվագեց։ Կրկին լերկարքով դուրս լեկան կարմիր սպասազգեստավորները։ Սկավեց լերկորդ մասը։

— Ախը, լերը պիտի դուրս զա գուտտապերչետղան, — անդադար հարցնում ելին լերեխաներն ամեն անգամ, լերը մի լելութ հաջորդում եր մէռսին։

— Վերջապես լերը պետք ե նա դուրս գտ։

— Ա՛յ, հենց հիմա...»

Յեկ իսկապես: Ուրախ վալսի նվազի տակ բացվեցին վարագուլըները և յերեաց նիհար շեկահեր տղափի ձեռքից բռնած լարախաղաց Բեկկերի բարձրահասակ կերպարանքը: Յերկուսն ել հաղած ելին մարմնագույն ու փալուն տրիկոներ: Նըանց հետեւց յերկու սպասավոր դուրս բերին վոսկեղոծ յերկար ձող, վորի մի ծայրին ամրացրած եր հորիզոնական յերկաթի կտոր:

Գալով արենակի մեջտեղը Բեկկերն ու տղան գլուխ տվին չորս կողմը, վորից հետո Բեկկերն աշ ձեռքը դրեց տղալի մեջքին և յերեք անգամ պատացրեց նրան ողի մեջ: Բայց դա միայն սկիզբն եր: Կրկին զլուխ տալով՝ Բեկկերը բարձրացրեց ձողը, կանգնեցրեց ուղղահայաց, ձողի հաստ ծայրն ամրացրեց վորին կապած վոսկե գոտուն և սկսեց հավասարակշռության բերել յերկաթն ամրացրած ձողի մլուս ծայրը, վորը կրկնուի բարձր գմբեթի տակ հազիվ նշնարվում եր: Ալսպիսով ձողը հարկ յեղած հավասարակշռության բերելով՝ լարախաղացը մի քանի խոսք շնչաց տղալին, վորն առաջ բարձրացավ նրա ուսերին, ապա բարակ ձեռքերով ու վոտքերով բռնեց ձողը և սկսեց աստիճանաբար բարձրանալ դեպի վեր: Յերեխայի ամեն մի շարժումը տատանում եր ձողը և փոխանցում եր Բեկկերին, վորը շարունակում եր պահպանել հավասարակշռությունը՝ հենվելով մի վոտքից մյուսը:

Բարձրագոչ Շքրամվոյ լավեց դահլիճում, յերբ տղան վերջապես հասավ ձողի ծալը և այնտեղից ողալին համբուլը ուղարկեց: Կրկին ամեն ինչ լոեց, բացի նվազախըմբից, վոր շարունակում եր վալս նվազել:

Մինչ ալդ տղան հորիզոնական յերկաթից բռնելով ձեռքի վրա ձգվեց ու սկսեց կամաց կամաց դեպի հետ ծռվել, աշխատելով վոտքերն անցկացնել հորիզոնական յերկաթի և զլիսի մեջտեղով: Մի ըոսկե միայն կարելի յեր տեսնել նրա հետ ընկած շիկահեր մազերը և փալուն ուլունքներով ծածկված արագ բարախող կուրծքը: Ձողը տատանվում եր և յերեռում եր թե վորքան ծանը եր Բեկկերի համար հավասարակշռություն պահպանելը:

— Բրավո... բրավո... — լսվեց նորից դահլիճում:
— Բավական ե, բավական ե, — լսվեցին լերկու լե-
րեք տեղերից:

Բայց ծափահարություններով ու աղմուկով լցվեց
ամբողջ կրկեսը, լերբ տղան կրկին նստած լերեաց լերկաթի
վրա և այնտեղից համբուլը ուղարկեց: Բեկկերը, աշքը
չհեռացնելով տղալից, նորից ինչ վոր շշնջաց, Տղան ան-
միջապես անցավ մի ուրիշ վարժության:

Զեռքերի վրա հենվելով, նա սկսեց զգուշությամբ
իջեցնել վոտքերը և պառկել մեջքի վրա: Այժմ սպասվում
երամենադժվար բանը: Անհրաժեշտ եր պառկել մեջքի վրա,
տեղավորվել հորիզոնական լերկաթի վրա այնպես, վոր-
պեսզի վոտքերը հավասարակշռեն զլխի հետ և ապա ան-
սպասելի հետ սողալ մեջքի վրա և կախվել ողի մեջ՝ կառ-
չած միայն ծնկախաղերով:

Համենայն դեպս ամեն ինչ հաջող եր կնում:


Ճիշտ ե՛թեև ձողն ուժեղ կերպով տատանվում եր, բայց
գուտտապերչե տղան արդեն ճամբի կիսին եր: Նա նկատելի
կերպով ծռվում եր միշտ դեպի ցած և սողում մեջքի վրա:
— Բավական ե, բավական ե, հարկավոր չե՛ — վճռա-
կանորեն կանչեցին մի քանիսը:

Տղան շարունակում եր սողալ մեջքի վրա և կամաց
կամաց իջնում գլխիվալը:

Հանկարծ մի ինչ վոր բան փալելով պտտվեց ողի
մեջ և նույն վայրկանին լսվեց արենալի վրա ընկնող
մի ինչ վոր բանի խուլ ձան:

Մի ակնթարթում դահլիճում ամեն ինչ ալեկոծվեց:
Հանդիսականների մի մասը տեղից վեր կացավ և աղմկեց,
լսվեցին բացականչություններ և կանացի ճիչերը Լսվեցին
բժիշկ պահանջող վրդովված ձաներ:

Աղենալում նույնպես իրարանցում եր տիրում: Սպա-
սավորներն ու ծաղրածուները շեշտակի ցատկում ելին
արենալի ցանկապատերից և շրջապատեցին Բեկկերին,
մի քանիսը վերցրին ինչ վոր մի բան և կուցած արագ



դուրս տարան արենալից դեպի ախոռը տանող մուտքի
վարագուլըների հետևը:

Արենայում մնաց միայն ծալրին ամրացրած լերկա-
թով վոսկեզոծ լերկար ձողը:

Նվազանումը, վորը մի ըոսկ լոել եր, տրված նշա-
նով հանկարծ նորից նվազեց:

Գլորվելով ու ճչալով արենա վազեցին մի քանի
ծաղրածուներ, Բայց այլևս նրանց վրա վոչ վոք ուշա-
դրություն չդարձրեց, չասարակությունն ամեն կողմից
խոնվում եր մուտքերի մոտերը:

Զնալած ընդհանուր իրարանցման, շատերը նկատե-
ցին թե ինչպես լերկնագույն զլիարկով ու թիկնոցով
մի գեղեցիկ շիկահեր աղջիկ, ամուր զրկած սևազգեստ
տիկնոջը, հեկեկում եր ու անդադար բարձրածախ կանչում:

— Ափսոս տղա... ափսոս...

Հետեւալ առավոտ կրկեսի աֆիշան այլևս չհայտա-
րաբեց գուտտապերչե տղայի լելութի մասին, Նրա անու-
նը նրանից հետո յել այլևս չիշվեց: Յեվ չեր ել կարող
հիշվել: Գուտտապերչե տղան այլևս կենդանի չեր:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003084

173

ԳԻՆԵ 60 ԿՈԴ.

Ա 23761

084,

Проз.

Д. ГРИГОРОВИЧ
ГУТТАПЕРЧЕВЫЙ МАЛЬЧИК
ГИЗ ССРА ЕРЕВАН

Пр... 0401